ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն), 2018թ. նոյեմբերի 5-9-ը:

Հրավիրող կողմը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագիր:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Իրավունքի, արդարադատության և զարգացման շաբաթ» միջազգային համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Միջազգային համաժողովի ընթացքում քննարկվել են իրավունքի գերակայությանը և դատական իշխանությանը, արդարադատության մատչելիությանը, ներքին տեղահանված անձանց իրավունքներին և ՄԱԿ-ի կողմից ընդունված «Կայուն զարգացման օրակարգ 2030-ի» իրականացմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. փետրվարի 21-ին ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ՀՀ վարչապետի թիվ 155-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի անդամ, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակների Իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի» համանախագահ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում

եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի հրավերով 2018թ. նոյեմբերի 5-ից 9-ը մասնակցել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Վաշինգտոն) կայացած Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Իրավունքի, արդարադատության և զարգացման շաբաթ» միջազգային համաժողովին:

«Իրավունքի, արդարադատության և զարգացման շաբաթ» միջազգային համաժողովի ընթացքում քննարկվել են ՄԱԿ-ի կողմից ընդունված «Կայուն զարգացման օրակարգ 2030-ի» իրականացմանը առնչվող հարցեր, որը ներառում է նաև տարբեր ոլորտների ազդեցության գնահատումը:

Հարկ է ընդգծել, որ միջազգային համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը հանդես է եկել ելույթով՝ մասնակիցներին ներկայացնելով մարդու իրավունքների պաշտպանության և դատաիրավական ոլորտներում իրականացված և նախատեսվող բարեփոխումների ծրագրերը, Հայաստանում 2015թ.-ից ի վեր Կայուն զարգացման նպատակների իրականացմանն առնչվող զարգացումները, ինչպես նաև՝ 2030 թ. օրակարգի և ԿԶՆ-ների ազգայնացման և իրականացման գործընթացում Հայաստանի Հանրապետության հիմնական տվյալները, այս ոլորտում ՀՀ կողմից արձանագրած առաջընթացը և նախատեսվող քայլերը:

Վիգեն Քոչարյանն իր ելույթում անդրադարձ է կատարել նաև 2018թ. հուլիսի 17-ին Նյու Յորքում Հայաստանի կողմից ներկայացված առաջին Ազգային կամավոր զեկույցին՝ ներկայացնելով Հայաստանի ամենօրյա կյանքի քաղաքական, իրավական, գործնական և վարքագծային առավելությունները, ինչպես նաև՝ խոչընդոտները և մարտահրավերները ԿԶՆ-ների իրականացման առնչությամբ:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը վերահաստատել է այն մոտեցումը՝ համաձայն որի, Հայաստանում Կայուն զարգացման նպատակների ազգայնացման գործընթացն ուղեկցվելու է Հայաստանի նոր կառավարության կողմից ձեռնարկված հավակնոտ բարեփոխումների ծրագրով:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը միջազգային համաժողովի շրջանակներում հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի և այլ միջազգային կառույցների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են այդ կառույցների կողմից արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցության հետագա հնարավոր ձևաչափերը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ «Իրավունքի, արդարադատության և զարգացման շաբաթ» միջազգային համաժողովի շրջանակներում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն իրականացնելու Հայաստանի դատական համակարգի դիտարկման և գնահատման ծրագիր, որի մեկնարկը նախատեսվում է ազդարարել 2019 թվականի սկզբին:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

14.11.2018թ.